

Թռչունների մոնիթորինգ

Կարճ ակնարկ

Թռչունների մոնիթորինգից ստացվող տվյալները թույլ են տալիս գնահատել թռչունների պոպուլյացիաների չափը, դրանց փոփոխությունները, տարբեր ապրելավայրերում տեսակների կազմի տարբերությունները և տեսակների առատության օրինաչափությունները:

Ցամաքային թռչունների կետային հաշվարկ

Կետային հաշվարկի ընթացքում դիտարկողը 15 րոպե մնում է մեկ կետում և արձանագրում դրա շուրջ գտնվող թռչուններին: Հայաստանում կետային հաշվարկը հիմնականում օգտագործվում է ջրային թռչունների դեպքում (տե՛ս «ջրային թռչունների հաշվարկ» բաժինը), բայց այն կարող է նաև կիրառվել ցամաքային թռչունների դեպքում: Յուրաքանչյուր կետի համար նախատեսված դիտարկման ժամանակահատվածը 15 րոպե է: Կետերի միջև հեռավորությունը սովորաբար առնվազն 800 մ է: Արձանագրվում են դիտարկողից մինչև 400 մ հեռավորության տիրույթում գտնվող թռչունները: Կետային հաշվարկներն իրականացվում են ուշ ապրիլից մինչև վաղ հունիս, առավոտյան՝ 6:00-ից մինչև 10:00-ն: Լրացուցիչ հաշվարկներ կարելի է կատարել երեկոյան՝ 21:00-00.00:

Ցամաքային թռչունների գծային տրանզեկտ հաշվարկ

Գծային տրանզեկտ հաշվարկի դեպքում դիտարկողը արձանագրում է թռչուններին որոշակի ուղով քայլելիս: Հաշվարկն իրականացվում է ֆիքսված 1-2 ժամվա ընթացքում, երբ դիտարկողը դանդաղ քայլում է տրանզեկտ ուղով՝ հաշվելով տրանզեկտի երկու կողմում մինչև 100 մ

հեռավորության վրա գտնվող բոլոր թռչուններին: Այդ գոտուց դուրս դիտարկված թռչունները սովորաբար չեն արձանագրվում: Ուղու նպատակահարմար երկարությունը 1-2 կմ է: Գծային տրանզեկտ հաշվարկներն իրականացվում են ուշ ապրիլից մինչև վաղ հունիս՝ առավոտյան 6:00- 10:00:.

Ջրային թռչունների կետային հաշվարկ

Ջրային թռչունների հաշվարկը, ինչպես հուշում է անվանումը, կենտրոնանում է ջրային թռչունների, սակայն նաև ջրի հետ ասոցացվող այնպիսի թռչունների վրա, ինչպիսիք են որորները, տառեղները և ճահճային թռչունները: Ջրային թռչունների հաշվարկն իրականացվում է ափի մեկ կամ մի քանի կետից դիտարկում կատարելով: Դիտարկողը հաշվարկում է իրենից և տեսադաշտի անկյունից (սովորաբար մոտ 180°) մինչև 400 մ (300- 500 մ) հեռավորության վրա գտնվող բոլոր թռչուններին ֆիքսված 30 րոպե ժամանակահատվածում: Ջրային թռչունների հաշվարկներն իրականացվում են վաղ ապրիլից մինչև վաղ հունիս՝ առավոտյան ժամը 7:00-11:00-ին: Բազմացման ժամանակահատվածների տարբերության պատճառով կարող է մի քանի այց պահանջվել գարնանը՝ բոլոր տեսակներին դիտարկելու նպատակով:

Գիշատիչ թռչունների բների որոնում

Գիշատիչ թռչուններն ու բվերը սովորաբար հանդիպում են չափազանց ցածր խտություններով, որոնք հնարավոր չէ հաշվել վերը ներկայացված ստանդարտացված մեթոդներով: Բնադրավայրերի կամ տարածքների որոնումը հնարավորություն է տալիս ավելի լավ պատկերացում կազմել ուսումնասիրվող տարածքում դրանց կարգավիճակի մասին: Գարնանը ցերեկային գիշատիչ թռչունների տարածքները կարելի է գտնել իրեն ցուցադրող արուի կամ զույգի հիման վրա: Բվերի տարածքները կարելի է գտնել դրանց ցուցադրական վոկալիզացիաներով, որոնք հնչում են շատ վաղ գարնանը: Ակտիվ բույնը կարելի է մատնանշել՝ դիտարկելով, թե որտեղ են բնադրող հասուն թռչունները

տանում իրենց որսը: Ավելի ուշ՝ ամռանը, տարածքի առկայությունը կարելի է ստուգել տարածքում առկա փետրավորված ձագերի միջոցով: Գիշատիչ թռչունների կամ բվերի զույգը հաճախ իր տարածքում մեկից ավելի բույն է կառուցում: Այսպիսով, պետք է հիշել, որ եթե զույգը բազմացման շրջանում գտնվում է իր տարածքում, և եթե հայտնի է միայն մեկ բնադրավայր, բայց այն դատարկ է, ապա զույգը կարող է ակտիվ բույն ունենալ մեկ այլ վայրում:

Այլ մեթոդներ

Քարտեզային հաշվարկի նպատակը կոնկրետ տարածքում թռչունների բոլոր տեղանքները գտնելն է : Վերջինս բավական աշխատատար է, ուստի նպատակահարմար է համեմատաբար փոքր և հստակ սահմանված տարածքների դեպքում:

Հատուկ ուսումնասիրություններ կարելի է կատարել այն տեսակների վերաբերյալ, որոնց այլ մեթոդների դեպքում բավարար չափով անդրադարձ չի կատարվել: Այդ կատեգորիայի տեսակներին են պատկանում, օրինակ, գաղութային տեսակները, ինչպիսիք են մեղվակերները կամ շատ հազվագյուտ տեսակները:

Օղակավորումը նշանակում է թռչունների առանձնյակների նշում օղակով (կամ երբեմն նշման այլ մեթոդներով): Դա կարող է այնպիսի տեղեկություններ (օր.՝ փոքր թռչունների տարեկան հաջողությունները բազմացման հարցում) հաղորդել, որոնք անհնար կլինեք ստանալ այլ եղանակով: Օղակավորման տարբեր սխեմաներ տարբեր նպատակների են ծառայում, օրինակ՝ Մշտական ջանքերի ներդրման տարածքներ (Constant Effort Sites)՝ կոնկրետ տարածքում բազմացող թռչունների վերաբերյալ տվյալներ:

Թռչնադիտարաններ և օղակավորման այլ մշտական տարածքներ՝ միգրացիա.

Ճտերի և դրանց ծնողների օղակավորում բնադրավայրում՝ տվյալներ առանձին բների և թուխտերի մասին.

Քաղաքացիական գիտությանն առնչվող արշավները կարող են շատ տեղեկություններ հաղորդել և հաջողություններ գրանցել հանրության շրջանում բնության վերաբերյալ դրական հետաքրքրվածություն առաջացնելու հարցում: Հայաստանում սպիտակ արագիլների բազմացման ու տեղաբաշխման, ինչպես նաև դրանց վրա աղտոտվածության ազդեցությանն առնչվող հարցերը հաջողությամբ ուսումնասիրվել են քաղաքացիական գիտության միջոցով:

Թռչնատեսակի դեպքի ուսումնասիրություն Սևավիզ սուզակ (*Podiceps nigricollis*)

ԲՊՄՄ (IUCN) կարգավիճակը Եվրոպայում՝ խոցելի (VU) Իրավական կարգավիճակը ԵՄ-ում. ԵՄ թռչունների վերաբերյալ հրահանգի հավելվածում ներառված տեսակ չէ, բայց կան իրավական հիշատակումներ ԵՄ թռչունների վերաբերյալ հրահանգում, Բեռնի կոնվենցիայում, Աֆրիկյան-Եվրասիական միգրացվող ջրային թռչունների պահպանության մասին համաձայնագրում: ԲՊՄՄ կարգավիճակը Հայաստանում. քիչ մտահոգող (LC) Ինչպես հաշվառել և մոնիթորինգ կատարել. Ջրային թռչունների կետային հաշվարկ Երբ գույքագրել և մոնիթորինգ կատարել. Աարիլի սկզբից մինչև հունիսի սկիզբ



Սևավիզ սուզակ, լուսանկարը՝ Պեյրի Ալրոթի

Թռչնատեսակի դեպքի ուսումնասիրություն Սևուկ կարմրատուտ (*Phoenicurus ochruros*)

ԲՊՄՄ (IUCN) կարգավիճակը Եվրոպայում՝ քիչ մտահոգող (LC) Իրավական կարգավիճակը ԵՄ-ում. ԵՄ թռչունների վերաբերյալ հրահանգի հավելվածում ներառված տեսակ չէ, բայց կան իրավական հիշատակումներ ԵՄ թռչունների վերաբերյալ հրահանգում, Բեռնի կոնվենցիայում, Բոննի կոնվենցիայում: ԲՊՄՄ կարգավիճակը Հայաստանում. քիչ մտահոգող (LC) Ինչպես հաշվառել և մոնիթորինգ կատարել. կետային հաշվարկ կամ գծային տրանզեկտ հաշվարկ (ցամաքային թռչուններ)

Երբ հաշվառել և մոնիթորինգ կատարել. ապրիլի վերջից մինչև հունիսի սկիզբ



Սևուկ կարմրատուտ, լուսանկարը՝ «Թվինինգ» թիմի

Թռչնատեսակի դեպքի ուսումնասիրություն Տափաստանային մկնաճուռակ (*Circus macrourus*)

ԲՊՄՄ (IUCN) կարգավիճակը Եվրոպայում՝ Քիչ մտահոգող (LC) Իրավական կարգավիճակը ԵՄ-ում. ԵՄ թռչունների հրահանգի I Հավելվածում ներառված տեսակ: Այս տեսակի այլ իրավական հիշատակումներ կան Բեռնի կոնվենցիայում, Բոննի կոնվենցիայում, Գիշատիչ թռչունների վերաբերյալ փոխըմբռնման հուշագրում, Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիայում (CITES), Կենդանական և բուսական աշխարհի առևտրի ԵՄ կանոնակարգերում: ԲՄՊՊ կարգավիճակը Հայաստանում. վտանգված (EN)

Ինչպես հաշվառել և մոնիթորինգ կատարել. Գիշատիչ թռչունների բների որոնում. Երբ հաշվառել և մոնիթորինգ կատարել. Կլոր տարին.



Տափաստանային մկնաճուռակ, լուսանկարը՝ Պեյրի Ալրոթի